պիտի վերադառնային հայրենիք և իրենց ուսածները սովորեցնէին Հայ ժողովրդի զանազան խաւերում։ Այդ սրամիտ պատանիների խմբակների մէջ շատ երևելի եղան Գէորգեան ճեմ. նախկին ուսումնաւարտ սան և հայապարանական կրթութիւն ստացած Սարգ. Կուկունեան և Աստուածատուր Ոսկանեան։ Սրանցից վերջինը Նուխու Հայոց եկեղեց. ծխական երկսեռ դպրոցների աւագ-ուսուցչի պաշտօնն էր վարում և որը յայտնի էր իբրև լուրջ և խոհուն երիտասարդ, սրանից մի 7—8 տարի առաջ, օրը ցերեկով, արիւնարբու մի թուրքի ձեռքով դնդակահար եղաւ Զոռլու Թրքախօս Հայադաւան գիւղի կալերի մօտ։ Ահա այսպէս Նիժում այժմ թէև կան հայախօս և գրաճանաչ շատ երիտասարդներ ու մի քանի հատ էլ գրագէտ երիտասարդներ, բայց ընդհանրապէս ուսման և գիտութեան կողմից Նիժը մնացել է շատ աննախանձելի վիճակի մէջ։ Իսկ Թրքախօս Հայադաւան գիւղացիները ամենաթշուառ և սոսկալի դրութեան մէջ են. սէր, հաշտութիւն, խաղաղութիւն, միաբանութիւն և համերաշխութիւն ամենևին չկայ սրանց մէջ։ Թրքախօս Հայադաւան Հայերի համար շատ սովորական բաներ են՝ իրար բամբասել, զրպարտել և միմեանց կործանելու համար՝ թուրք ազդեցիկ բէկերի մօտ քսութիւն ու մատնութիւն անել և նրանց ձեռքով իրենց արիւնակից ու ազգակից Հայ եղբայրների տունը քանդել։ Կարճ խօսքով՝ Թրքախօս Հայ գիւղացիների մէջ՝ մատնիչ Յուդայի դեր կատարողներ խիստ շատ կան, որոնք